ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԱԲՈՎՅԱՆԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ>>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<< Կոտայքի մարզ, ք. Աբովյան,2208, Ուսանողական թաղամաս 3, հեռ.(0222) 2-14-67,E-mail abovyanedu@mail.ru

N 202

« 27 » 08 2025թ

27 օգոստոսի 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

<<ԴԱՅՍՍ>> ՍՊԸ-ի
տնօրեն՝ Հակոբ Չոբանյանին

Հարգելի Հակոբ Չոբանյան

«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<ԴԱՅՍՍ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025թ.-ի օգոստոսի 18-ին կնքված **ԱԿՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-25/2-6** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, սակայն 2025թ.-ի օգոստոսի 27-ին Վաճառողի կողմից ստացվել է գրություն առ այն, որ Վաճառողը հրաժարվում է կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքի՝ Մածունի, մատակարարումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ը հարկադրված է 2025թ.-ի օգոստոսի 27-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 14940 (տասնչորս հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամի և 9960 (ինը հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի հաշվին **(Հ/Հ 900108000523)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն <<ԴԱՅՍՍ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի
Տնօրեն՝ **Ա. Դաղբաշյան**